ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«___» _____ 2016 թ. N_____-Ա

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի N 185-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի 2016 թվականի հունիսի 13-ի «Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի 2012 թվականի նոյեմբերի 13-ի N 488-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 185-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 3-րդ կետում «մինչև 2016 թվականի նոյեմբերի 1-ը» բառերը փոխարինել «մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը» բառերով.

2) որոշման հավելվածում

«Լևոն Սարգսյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ»

բառերը փոխարինել

«Ռուզաննա Սեյրանյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի ղեկավար»

բառերով, իսկ

«Նարինե Գրիգորյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար (միջգերատեսչական հանձնաժողովի քարտուղար)»

բառերը փոխարինել

«Հայկ Հակոբյան	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (միջգերատեսչական հանձնաժողովի քարտուղար)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի N 185-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի 2016 թվականի հունիսի 13-ի N 185-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգի նախագծի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգի նախագիծը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնելու ժամկետի երկարաձգման և միջգերատեսչական հանձնաժողովի կազմում փոփոխություն կատարելու անհրաժեշտությամբ:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ *Ա. ՄԽՈՅԱՆ*

ԻՐԱՎԱԿԱՆ-ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի N 185-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի 2016 թվականի հունիսի 13-ի N 185-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ *Հ. ՀԱԿՈԲՅԱՆ*

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի 2016 թվականի հունիսի 13-ի N 185-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն

ԼՂՀ կառավարության և ԼՂՀ վարչապետի որոշումներն ուղարկել՝

1. ԼՂՀ Նախագահի աշխատակազմ
2. ԼՂՀ Ազգային Ժողով
3. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն
4. ԼՂՀ ֆինանսների նախարարություն
5. ԼՂՀ արդարադատության նախարարություն
6. ԼՂՀ էկոնոմիկայի նախարարություն
7. ԼՂՀ առողջապահության նախարարություն
8. ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն
9. ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
10. ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն
11. ԼՂՀ ԿԱ առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայություն
12. ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն
13. Շուշիի տեխնոլոգիական համալսարան

Նախագիծը պատրաստողը՝

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժին

_____ ***Հ. Հակոբյան***

(ստորագրությունը)

«_____» _____ 2016 թ.